ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«03» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000104

Ձեռնարկողը՝ ***«ՎԻ ԸՆԴ ԲԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ***
ք. Երևան, Կորյունի փ. 23

Գործունեությունը՝ ***Դավթաշեն վարչական շրջանի Փիրումյաններ 7/6 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 002104

<<03>> 11 2020թ.

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջան, Փիրումյաններ 7/6 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ՎԻ ԸՆԴ ԲԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Դավթաշեն վարչական շրջան

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Փիրումյաններ 7/6 հասցեում «ՎԻ ԸՆԴ ԲԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող՝ 0.364941հա ընդհանուր մակերեսով հողամասում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ հասարակական կառուցապատման:

Գործունեության նպատակն է՝ կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ համալիր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով շինություն: Այն ներդաշնակ է տվյալ միջավայրում շրջակա կառույցներին և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչընդոտ՝ շրջակա բնակչության համար:

Նկարագրական մաս.

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է հասարակական շենքերի հարևանությամբ: Այն հարթ է և երկրաբանական տեսակետից բարենպաստ կառուցապատման համար:

Մինչև 30մ խորության վրա գրունտային ջրերը բացակայում են:

Բազմաֆունկցիոնալ համալիրը կլինի բնակելի և հասարակական հատվածներից: Նախնական հայտով նախատեսված է 15 հարկ (44%), որից առաջինը տեխնիկական է, իսկ 14՝ բնակելի: Համալիրը կունենա 5 ստորգետնյա հարկ, որից երկուսը

հասարակական նշանակության են, իսկ երեքը՝ բնակելի մասի համար նախատեսված ավտոկայանատեղի (142), որը սպասարկելու է բնակիչների 78%: Ստորգետնյա ավոկայանատեղիների մուտքը կազմակերպված է առևտրային գլխավոր մուտքին կից՝ 6մ լայնությամբ, երկկողմանի երթևեկությամբ:

Բնակելի մասը լուծված է երեք մուտքերով, յուրաքանչյուրը մեկ անծխանցիկ աստիճանավանդակով և երկու վերելակով: Բնակելի հարկը բաղկացած է 13 բնակարաններից՝ 48 -ից մինչև 143մ^2:

Նախագծման ընթացքում հաշվի է առնված հաշմանդամների և սակավաշարժ խմբերի անխոչընդոտ շարժի կազմակերպման միջոցները, ուստի շինությունների մուտքային հանգույցներում առկա են թեքահարթակներ, իսկ շինության ներսում՝ վերելակներ:

Բնակելի համալիրի ջրամատակարարումն ու ջրահեռացումն, էլեկտրա- և գազամատակարարումն իրականացվելու են համաձայն «Վեոլիա Ջուր», «ՀԷՑ» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 34 մարդ է:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ էքսկավատոր, աշտարակային վերամբարձ կռունկ, բուլդոզեր, ավտոինքնաթափ, ավտովերամբարձ կռունկ և այլն:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավոևապես՝ բետոն, ամրան, ալյումինե կոմպոզիտային նյութեր, ապակի, տրավերտինե երեսպատում, բարձրորակ ներկ և այլն:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքերի ընթացքում կառաջանան 600-700կգ կենցաղային և 900տ՝ շինարարական աղբ: Համապատասխան ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով կենցաղային աղբն ամբողջությամբ կտեղափոխվի մոտակա աղբավայր, իսկ շինարարական աղբը՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի կենցաղային նպատակների համար:

Շինարարության փուլում ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 1609.2մ^3/շին. ժամ:

Շինանձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու նպատակով շինհրապարում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք կապամոնտաժվեն շինաշխատանքերի ավարտից հետո:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 55000մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգված, որից 4800մ^3-ը օգտագործելու է հետլիցքի նպատակով: Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Համաձայն հայտի, կանաչապատման մակերեսը կազմելու է 800մ² և տանիքի կանաչապատումը՝ 1000մ²:

Ոռոգումն ամբողջությամբ կազմակերպելու համար նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց՝ կաթիլային ոռոգման հանգույցներ, ռետինե խողովակներով: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի միանալով տարածքով անցնող մոտակա ոռոգման ջրատարին՝ պայմանագրային հիմունքներով կամ ավտոցիստերնով՝ մասնագիտացված ընկերության կողմից:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Դավթաշեն վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների և պահպանության ենթակա տարածքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են մթնոլորտային օդի, հողի և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- ջրցանի կատարում՝ շինարարության ընթացքում մթնոլորտային օդ փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկե մեքենաներով,
- շինարարական նյութերի տեղադրում՝ բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- շինհրապարակում թափոնների տարանջատում և աղբամանների տեղադրում,
- շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում շինարարական տեխնիկայի լիցքավորում և յուղում,
- հատուկ տակդիրների վրա հեղուկ նյութերի պահում՝ հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով,
- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- մեքենայի օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի և արտակարգ իրավիճակների անվտանգության կանոնների պահպանում:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 800 հազ. դրամ:

02543163
ՓՈՐՁՔԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
COMMISSION OF EXPERTS

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներն, Առողջապահության նախարարությունը և Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի թաղապետարանը: Հայտի լրամշակման փուլում հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի թաղապետարանում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը կողմ է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված կարգով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջրերը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված ժամանակացույցով՝ ըստ աշխատանքային օրերի և ժամերի:
- Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ МИНИСТЕРСТВА ЗДРАВООХРАНЕНИЯ РА
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER OF THE MINISTRY OF HEALTH OF RA
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎԻ ԸՆԴ ԲԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Փիրումյաններ 7/6 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան